


ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում (կազմողներ՝ Ռ. Զարյան, Ա. Բեքարյան), Երևան, «Գիտություն» հրատ., 2020, 656 էջ:



«1889 թվականի ամռանը մեզ մոտ (Սիմֆերոպոլում – Ա.Ա.) հյուրախաղերով հանդես եկավ նշանավոր ողբերգակ Ադամյանը: Տպավորություն նա թողեց հսկայական՝ իր տեմպերամենտով, կրքով, արտիստիկ նյարդայնությամբ և այն ազնվությամբ ու չափի զգացումով լի խաղով, որը հատուկ է միայն գեղարվեստական մեծ անհատականություններին: Դա վիթխարի տաղանդ էր: Շատ տարիներ են անցել, բայց նրա խաղի ազդեցությունը դեռևս կենդանի է իմ հիշողության մեջ, և ականա ծագում էր համեմատությունը Ադամյանի հետ, երբ տեսնում էի մեծ ողբերգակների, ինչպիսիք էին Ռոսսին, Սալվինին, Պոսարտը և այլք: Այդ համե-

մատությունից Ադամյանը չէր տուժում: Նա մեր ժողովրդի ծնած խոշորագույն տաղանդներից էր»¹: Այսպես է գրել իր «Ինքնակենսագրության» մեջ հայ մեծ դերասանի խաղով հիացած՝ համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը:

Ճիշտ 130 տարի առաջ՝ 1891 թ. հունիսի 4-ին, ուժերի ծաղկման շրջանում՝ 42 տարեկանում կյանքից հեռացած հայ բեմի վաղամեռիկ հանճարը՝ Պետրոս Ադամյանը (1849-1891), իր 300 դերերով անջնջելի հետք թողեց հայ մշակույթի պատմության մեջ: Ադամյանի արվեստն օրգանապես ներհյուսվեց հայ թատրոնի պատմությանը: Հատկապես ծանրակշիռ էր նրա ներդրումը շեքսպիրյան թատրոնի պատմության մեջ. շեքսպիրականի լավագույն էջերն

¹ ԳԱԹ, Հովհաննես Նալբանդյանի ֆոնդ, N 1 (ա), Ինքնակենսագրություն, 1913 թ. էջ 5:

էին Ադամյան-Օթելլոն ու Ադամյան-Լիրը, իսկ Ադամյան-Համլետը գլուխգործոցն էր, որով հանդես է եկել 40 անգամ: Ավելորդ չենք համարում հիշատակել, որ 1887-ին Թիֆլիսում լույս է տեսել Պ. Ադամյանի «Շեքսպիր և յուր Համլետը ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» աշխատությունը:

Ադամյանը նաև բանաստեղծ էր, զբաղվել է գեղանկարչությամբ ու գրաֆիկայով՝ հիմնականում հանդես եկել որպես դիմանկարիչ: Նա վրձնել է եպիսկոպոս Մամբրե Մարկոսյանի (Ադամյանի պորտրետային լավագույն գործերից է), մշակութային գործիչներ Հովհաննես Այվազովսկու, Գևորգ Չմշկյանի, Գրիգոր Արծրունու և այլոց կենդանագրերը, ինչպես նաև շեքսպիրյան հերոսներին բեմական ռոմանտիկ կերպարանքով ներկայացնող պատկերներ («Ինքնանկար Համլետի դերում», «Օֆելիա» ևն): Նա ստեղծել է փոքրաչափ նատյուրմորտներ, իսկ Այվազովսկու ազդեցությամբ վրձնել է մի քանի ծովանկար: «Պ. Ադամյանի գրաֆիկական մեծաքանակ ժառանգության մեջ հանդիպում են նաև գեղարվեստական որոշակի արժանիքներով օժտված, ստեղծագործական ուրույն մտահղացմամբ տասնյակ մատիտանկարներ և առանձին օֆորտներ»², - նկատել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը: Դերասանի նկարչական արվեստի ուսումնասիրությանն է նվիրված նաև Բ. Հովակիմյանի «Պետրոս Ադամյանի Շեքսպիրյան նկարները» աշխատությունը (1998):

Ասում են, թե իր գրական ու նկարչական գործունեությամբ արտիստը «կոճում էր մոռացման դեմ» (էջ 228): Հարցին, թե՛ «Ի՞նչ կարիք ունիս նկարչի անուն վաստակելու, քանի որ իբրեւ բեմական արտիստ անզուգական ես», նա դառը թախիծով պատասխանել է. «Ո՞վ կարող է իմ մասին պատմել ապագայ սերունդին, եթե ոչ ծերունիների թառամած յիշողությւնը: Ես փափաքում եմ ունենալ մի վկայագիր ապագայի համար, - ավելացնում էր նա՝ ձեռով զարկելով իր ձեռագիր վիպակների եւ ոտանավորների տետրին կամ իւր նկարներին» (էջ 214):

Դեռևս Պ. Ադամյանի կյանքի օրոք հրատարակվեցին նրա մասին երկու՝ Պ. Տոնապետյանի «Քսան և հնգամյա բեմական գործունեության Պ. Հ. Ադամյանի» (Կ. Պոլիս, 1888) և Արամ Վրույրի «Պետրոս Հ. Ադամյան» (Թիֆլիս, 1891) գրքերը:

Պ. Ադամյանի կյանքի ու արվեստի ուսումնասիրությունը հարատև եղել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի թատերագետների գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Ադամյանագիտության մեջ հատկապես

² Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-X Մի դարերում, Երևան, էջ 35:

նշանակալի է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ռուբեն Զարյանի վաստակը, որը հեղինակել է «Ադամյան: Արվեստը» (1960) և «Ադամյան: Կյանքը» (1961) սովորաճավալ աշխատությունները: Ի մի բերելով պարբերական մամուլի էջերում սփռված քննախոսականները, հիշողությունները, արխիվային փաստաթղթերը, գրած և ստացված նամակները՝ Ռ.Զարյանը լույս աշխարհ է բերել դրանք և դրանց հիման վրա ներկայացրել համաշխարհային խոշորագույն ողբերգակներից մեկի կյանքի պատմությունը, կատարել նրա բեմական արվեստի քննությունը: Շեքսպիրյան կերպարների ադամյանական մեկնաբանությունների քննությանն են նվիրված Ռ. Զարյանի «Шекспир Адамына» (1964) և «Ադամյանի Շեքսպիրը» (1965) ուսումնասիրությունները:

Պ. Ադամյանի կյանքին ու գործունեությանն է անդրադարձել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի թատրոնի, ապա՝ սփյուռքահայ արվեստի բաժինների վարիչ Գառնիկ Ստեփանյանն իր «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» հիմնարար ուսումնասիրության 1-ին (1962) և 2-րդ (1969) հատորներում: Իսկ մինչ այդ նա հրատարակել էր «Պետրոս Ադամյան. Կենսագրական ակնարկ» (1941), «Պետրոս Ադամյան» (1944) և «Петрос Адамян» (1956) մենագրությունները:

Պ. Ադամյանի կյանքին ու գործունեությանն է անդրադարձել նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանն իր «Հայ թատրոնի պատմություն. XIX դար» (1996, 2010) սովորաճավալ աշխատության մեջ:

Եվ ահավասիկ 1980-ական թվականների կեսերին Ռուբեն Զարյանը որոշում է կազմել «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում» խորագրով ժողովածուն և ինստիտուտի՝ իր իսկ հիմնադրած շեքսպիրագիտության բաժնի աշխատակից, երիտասարդ հետազոտող Անահիտ Բեքարյանին առաջարկում է ուսումնասիրել հայ և ռուսական մամուլում Պ. Ադամյանի մասին տպագրված նյութերը՝ նախապես նրան հանձնելով մի քանի հուշ-հոդվածներ և հանձնարարելով կազմել դրանց համար ծանոթագրություններ, ինչպես նաև որոնել նոր հուշագրություններ անվանի դերասանի մասին: Մոտ երկու տարվա համատեղ աշխատանքի շնորհիվ հավաքվում և համակարգվում է բավական հարուստ նյութ, և կազմվում է ժողովածուի նախնական տարբերակը՝ մոտավորապես 200 մեքենագիր էջ: Սակայն 1980-ականների վերջերին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները վիժեցնում են այդ հույժ կարևոր ծրագրի իրականացումը:

Տասնամյակներ անց՝ 2017 թվականին, մեր խնդրանքով, արդեն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի

բաժին ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանը ձեռնամուխ եղավ Արվեստի ինստիտուտի՝ Ռուբեն Զարյանի անվան շեքսպիրյան գրադարանի վերաբերյալ հետազոտությանը: Այդ ընթացքում նա պատահաբար հայտնաբերում է «Ադամյանի թղթապանակը»: Ինստիտուտի տնօրինությունը որոշեց ընթացք տալ «մոռացված գործին»: Սրանով իսկ Ա. Բեքարյանը պիտի իր համեստ նվերը մատուցեր «սիրված արվեստագետի՝ Պետրոս Ադամյանի պայծառ հիշատակին», - կարդում ենք գրախոսվող ժողովածուի «Երկու խոսքում», որը հեղինակել է Ա. Բեքարյանը:

Հընթացս պարզ դարձավ, որ «մոռացված գործը» դեռևս ավարտուն աշխատանք չէ, պահանջվում է նոր մոտեցում, ցանկություն, եռանդ ու ժամանակ. անելիքները շատ էին: Եվ այդ բժախնդիր ու մանրակրկիտ ծավալուն աշխատանքը՝ ճշգրտել աղբյուրները, թարգմանությունները, ծանոթագրությունները, կատարել լրացումներ, ավելացնել հավելվածներ և այլն, բարեխղճորեն կատարեց հենց Անահիտ Բեքարյանը: Ստացվեց ծավալով նախկինից ավելի քան երեք անգամ մեծ աշխատություն, որտեղ ի մի բերվեց գրեթե այն ամենը, ինչ Պետրոս Ադամյանի մասին հրատարակել են նրա ժամանակակիցները հայ և ռուսական մամուլում, ընդ որում ժողովածուում զետեղվել են նաև նրա մասին բացասաբար արտահայտված հեղինակների հոդվածները: «Ադամեանը մինչև մահ չազատեց հայկական նախանձի և չկամութեան խայթոցներից: Ճշմարիտ է, նա բարեկամներ և պաշտպաններ շատ ուներ, բայց պակաս չէր թիւը և՛ այն զագրելի լրագրական տղրուկների, որոնց համար ոչ մի բարձրութիւն կամ սրբութիւն չկայ: Ադամեան զգաւնքով և արհամարհանքով էր վերաբերում դէպի իր այդ գաճաճ «հակառակորդները», - նկատել է Ալ. Շիրվանզադեն, - նա շատ լաւ գիտէր, որ հայը ինչ ասպարէզում ևս գործէ և որքան ևս գնահատւէ օտարներից, այնուամենայնիւ իր հայրենակիցների մի մասի աչքի փուշն է մնալու: Գիտէր, որ այլասերած ազգի մեջ միշտ եղել են, կան և պիտի լինեն քսու չարամտութեան հերոսներ, որոնց համար իրանց այս կամ այն հայրենակցի բարձրանալը դժոխային տանջանք է, որ այդ անձերի, անշնորհք, անխելք, անզգայ, անխիղճ ու սև անձանց միակ հոգեկան հաճոյքն է մութ անկիւններից քարեր արձակել այն մարդկանց վրայ, որոնց կօշիկների կրունկներին չարժեն իրանք...» (էջ 221-222):

Եվ ահա 2020 թվականին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում» շատ սպասված ժողովածուն, որը կազմել են Ռուբեն Զարյանը և Անահիտ Բեքարյանը: Ժողովածուի գիտական խմբագիրն է Հենրիկ Հովհաննիսյանը: Ժողովածուն առաջին անգամ ամփոփ ներկա-

յացնում է ժամանակակիցների հուշերը հայ մեծ դերասան Պետրոս Ադամյանի մասին: Ներառված են հայ և ռուսական պարբերական մամուլում ու ժողովածուներում Պետրոս Ադամյանի մասին տեղ գտած հուշագրությունները՝ համապատասխան ծանոթագրություններով:

Սակայն մինչ ժողովածուի արժևորմանն անցնելը ուզում եմ հատկապես ընդգծել մի կարևոր հանգամանք: Ժողովածուն լույս աշխարհ է եկել շնորհիվ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի աջակցության, որի համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում կոմիտեի նախագահ Սարգիս Հայրցյանին և գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող, գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Ռուզան Ասատրյանին:

Այժմ՝ ըստ էության:

Դժվար է գերազնահատել ժամանակի մամուլի արձագանքների ու ժամանակակիցների հուշագրությունների դերը դերասանների արվեստի հետագա ուսումնասիրողների համար: «Դերասանի արվեստը հեռացող ու հուշի վերածվող արվեստ է, - իրավացիորեն նկատում է ժողովածուի «Խմբագրի կողմից» բաժնում Հենրիկ Հովհաննիսյանը, - ամեն ինչ ստեղծում է իր ժամանակին և իր ժամանակի համար: Այս արվեստի թողած հետքը լրագրային թատերախոսությունն է կամ ժամանակակցի հուշը: Հետագայի ուսումնասիրողը դիմում է այդ նյութին ու գունաթափված լուսանկարներին և փորձում պատկերացում ստեղծել ժամանակի ամենակույզ գիրկն անցած գեղարվեստական երևույթի շուրջ» (էջ 5):

Եվ իսկապես՝ արտիստի փառքը շատ կարճատև է: Մարդկանց հիշողության մեջ նրանք՝ դերասաններն ու երաժիշտ-կատարողները, տեղ ունեն այնքան ժամանակ, որքան նրանք հանդես են գալիս բեմում: Այս տեսակետից դերասանական ու կատարողական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող թատերագետի ու երաժշտագետի համար նմանատիպ ժողովածուները խիստ կարևոր նշանակություն ունեն, «և ներկա ժողովածուն այդ խնդրին է ծանայում» (էջ 5):

Ուշագրավ է ժողովածուի կառուցվածքը: Որպես առաջաբան՝ Ա. Բեքարյանն ընտրել է մեծ ողբերգակի ժամանակակից, հայ ականավոր վիպասան և դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեի «Պետրոս Ադամյան» հոդվածը՝ դերասանի մահախոսականը, որը տպագրվել է թիֆլիսյան «Արձագանք» շաբաթաթերթի 1891 թ. հունիսի 9-ի համարում, «բեմական հսկայի» մահից 5 օր անց: Շիրվանզադեն նկատել է. «Չը կայ այլ ևս Ադամեանը: Ահա մի ողբալի լուր, որ չար մորիկի պես անցնելով երկրից երկիր՝ պետք է ցաւ պատճառէ առանց ազգի խորութեան այն ամենքին, որ գէթ մի անգամ տեսել են բեմական հանճարին բեմի վրայ» (էջ 9): Ի դեպ, այս ընտրությունը խիստ

հիմնավոր է և հասկանալի, քանի որ Շիրվանզադեն հայ գրողներից միակն է, որ չորս տարի շարունակ (մինչև Ադամյանի՝ Կովկասից հեռանալը) վայելել է մեծ արտիստի բարեկամությունը: Ավելին՝ «Թիֆլիս կամ Բագու գտնված ժամանակ գրեթե օր չէ եղել, որ մենք չը հանդիպէինք», - խոստովանել է Շիրվանզադեն (էջ 223):

Գրախոսվող ժողովածուն զգալի հարուստ նյութ է մատուցում ընթերցողին Պ. Ադամյանի կյանքի, գործունեության, մարդկային հատկանիշների, գաղափարների, ստեղծագործական մտահղացումների և մտահոգությունների մասին՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու արտիստի ամբողջական դիմանկարը:

Ադամյանի մասին ժամանակակիցների հուշերը գրվել և հիմնականում առաջին անգամ տպագրվել են 1885-1916 թթ. ընթացքում: Ժողովածուում ընդգրկվել են հայ գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեի, Հովհաննես Թումանյանի, Ռաֆայել Պատկանյանի, Արշակ Չոպանյանի, Լեոյի, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանի, Տիգրան Եսայանի, բեմադրիչ Գևորգ Չմշկյանի, դերասաններ Սիրանույշի, Ազնիվ Հրաչյայի, Արմեն Արմենյանի, Ամիրան Մանդինյանի և էլի շատ շատերի հուշերը:

Որպես գրախոսվող ժողովածուի վերջաբան՝ Ա. Բեքարյանն ընտրել է հայ երգիծաբան, խմբագիր և դերասան Երվանդ Թոլայանի «Պետրոս Հ. Ադամեան. Ողբերգու անգուգական» հոդվածը, որը տպագրվել է Կ.Պոլսում հրատարակվող «Ծաղիկ» օրաթերթի 1899 թ. դեկտեմբերի 30-ի համարում:

Հոդվածն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ո՛ղջ է, կենդանի՛ է ան ամեն հայու համար. Շիշլիի գերեզմանոցը իր ուրուականը կը պարունակէ: Ա՛, իրա՛ւ, Ադամեան մը կրնայ ա՛լ չչնչել, սիրտ մը կրնայ ալ չբաբախել, մարդ մը կրնայ այս աշխարհէն մեկնած ըլլալ, բա՛յց Օթէլլօ, Համլէթ, Արքայ Լիր, Քին, Ուրիել Ակոսթա, չէ՛, չեն՝ կրնար երբեք մեռնիլ: Ասոնք ստեղծագործութիւններ են: Հայը չպիտի մոռնայ քեզ, Ադամեա՛ն, եւ մանաւանդ զանոնք: Անոնց անմոռանալի յիշատակն ես իմ զաւկիս պիտի կրկնեմ, զաւակս զայն իր թոռա՛ն պիտի կտակէ... Ողբերգո՛ւդ անգուգական, հանգի՛ստ ննջէ՛ Անմահութեան ու Յաւիտենականութեան գիրկը» (էջ 443):

Հատկապես արժեքավոր են ժողովածուի հավելվածները: Հավելված I-ում ընդգրկված են ականատեսների վկայություններից գրի առնված հուշերը, Հավելված II-ում՝ Պ. Ադամյանին նվիրված բանաստեղծությունները, որոնց հեղինակների թվում են Հովհաննես Թումանյանն ու Եղիշե Չարենցը:

Պ. Ադամյանի ստեղծագործական ամբողջական կերպարի լիարժեք բացահայտման է միտված նրա մարմնավորած կերպարների ցանկը (Հավելված III, էջ 463-480):

Ժողովածուն եզրափակում են Ադամյանի մասին գրված ռուսերեն հոդվածների բնագրերը (Հավելված IV, էջ 481-517), որոնց հեղինակներն են բեմադրիչներ Վլադիմիր Նեմիրովիչ - Դանչենկոն, գրաքննադատ Ալեքսեյ Վեսելովսկին, դերասաններ Իվան Պերեստիանին, Դմիտրի Գարին-Վինդինգը, Նադեժդա Տիրասպոլսկայան և ուրիշներ:

Ժողովածուն կազմելիս նույնությամբ պահպանվել է բնագրի տեքստը (ուղղվել են միայն կոպիտ սխալները և ակնհայտ վրիպակները): Բոլոր նյութերը բերված են ժամանակագրական կարգով և արտատպված են սկզբնաղբյուրներից: Եթե որևէ հեղինակ ունի մեկից ավելի հոդված, ապա հաշվի է առնվել նրա առաջին հոդվածի հրատարակման տարեթիվը: Ծանոթագրությունները բերված են ըստ առանձին հոդվածների: Ժողովածուում երկու և ավելի անգամ կրկնվող ծանոթագրությունները համախմբվել են «ընդհանուր ծանոթագրություններ (ըծ)» անվանման տակ և առանձին հոդվածի այդպիսի ծանոթագրության դեպքում հղում է կատարվում ԸԾ-ին (օրինակ՝ ԸԾ-15, պետք է նայել ԸԾ-ի 15-րդ կետը):

Անշուշտ, գրախոսվող արժեքավոր ժողովածուն, որը ևս մեկ անգամ փաստում է, թե հայ մեծ դերասանին ինչքան բարձր են գնահատել օտար, տվյալ դեպքում՝ ռուս գործիչները, ծանրակշիռ ներդրում է հայ թատերագիտության մեջ:

Վստահ ենք, որ այն խթան կդառնա հայ բեմի (և ոչ միայն) մյուս վարպետների վերաբերյալ նմանատիպ ժողովածուների ստեղծման համար:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր